

այդ սօփեստութիւն կը լինէր, որովհետեւ ամեն ոք կարծու՞մ է, թէ միայն իր բննագատութիւնն է պատշաճ և անաչառ, միւսներինը աւելորդ ու սխալ են: Մտակայ անցեալը ցոյց տուեց յամենայն դէպս, որ սխալ չի եղել մեր ուղղութիւնը:

Կարծու՞մ ենք, որ մեր այս բացատրութիւնները պարզեցին մի աւելորդ անդամ և ու մեր վերաբերմունքը դէպի Մայր Աթոռը:

**ՄԻ ԱՌԱՋԱՐԿ ԵՒՍ ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ
400-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻԻ**

Եղած բազմաթիւ առաջարկները իմանալով հանդերձ չեմ վարանում կրկնել ^{*)} նաև մի առաջարկ, որովհետև մեծ աօնք իր ընդարձակ բովանդակութեամբ, իր կուսուրական կարևոր նշանակութեամբ մեր կեանքի գրեթէ բոլոր կողմերն էլ շօշափում է և բոլոր դասակարգերին էլ պարտաւորեցնում է աջակցել, կենդանի մասնակցութիւն ցոյց տալ այդ համազգային աօնում:

Այն հանգամանքն իսկ, որ մինչև այժմ էլ դեռ բազմաթիւ տեղերից նորանոր առաջարկներ են լինում, պարզ ապացոյց է, որ այդ աօնք գրեթէ ամեն տեղ էլ հետաքրքրութիւն է առաջացրել և ուրախ պիտի լինինք, եթէ միայն այդ հետաքրքրութիւնը լրագրի էջերից դուրս գալով հետզհետեւ կենդանի գործի փոխարկուի: Բոլոր առաջարկութիւններն էլ անշուշտ կազմուած և կազմուելիք յօրելեանական յանձնաժողովների ու շարքութիւնից պէտք է որ չվրիպեն, և բնարած ձեռնհաս անձանց հմտութեանն ու կարողութեանն է մնում ընտրել կղանակներից լաւը, օգտաւէտը:

Իսկ այդ գործի համար, ըստ իս, այն փութկտութիւնը, որ թիֆլիզի յանձնաժողովը ցոյց է ապիս՝ անպատճառ աօնել այն թուի նոյնութիւն, այնքան էլ ձեռնառու չէ, որովհետև մինչև այժմ դեռ մի ընդհանուր կարակացութեան չեմ եկել աօնք վայել կերպով յաւերժացնելու խնդրի նկատմամբ մի կողմից, միւս կողմից էլ շարունակուած են առաջարկութիւնները:

Տպագրութեան աօնի հետ սերտ կապ ունի տպագրութեան արուեստի զարգացման, կատարելագործման գործի մասին կանոնաւոր հոգ տանելու աշխատանքը, իսկ այս առթիւ մեր մամուլում կարող անձինք անհասկանալիօրէն լռութիւն են պահպանում: Տպագրութեան արուեստը իր ծագումից մինչև այժմ դարգացման բաւական աստիճաններ է անցել և շատ երկրներում օրինակելի կատարելութեան է հասել շնորհիւ նախանձախնդիր հրատարակիչների և տպարանական ընկերութիւնների: Այժմ եւրօպական առաջնակարգ տպարանը այնպիսի ընտիր տպուած աշխատութիւններ է լոյս ընծայում, որ

ընթերցողի հիացմունքին է արժանանում իր գեղեցիկ, մաքուր, պարզ ընթերցանութեան պատճառով:

Ի՞նչ դրութեան մէջ է մեր տպագրական արուեստը: Համեմատելով իր 400-ամեայ գոյութեան պատկառելի անցեալի հետ պէտք է այժմ—յօրելեանի նախօրեակին խտտովանենք, որ մեր տպագրութեան արուեստը նոյնքան պատկառելի յառաջադիմութիւն չի ունեցել:

Այժմեան մեր տպագրական առուերը բաւական խառն վիճակ ունին և մինչև այժմ էլ դեռ մի լաւ, գեղեցիկ տպագրական հաշակաւոր արուեստով հայերէն աշխատութիւն չունենք, եթէ չլիչենք մի երկու ընտիր հրատարակութիւններ Վիեննայի և Վեննայիի Միտիթարեանների: Մեր այրութենի թէ զլիտագրերը, թէ հասարակ առուերը շատ քիչ փոփոխութիւններ են ենթարկուել, շատ քիչ են կոկուել արտաքին ձևերի կողմից: Առէք մեր թերթերը և տեսէք, որքան թիւրիմացութիւնների է ենթարկուած նոյնիսկ հմտաւոր ընթերցողը, շնորհիւ առուերի խառնիճաղանջութեան, նրանց ձևերի, կողապարների անորոշութեան: Իսկ թէ ինչ դժուարութիւն կը քաշէ լեզուին դեռ ոչ լիովին ծանօթ ընթերցողը—այդ պէտք է հարցնել առաջախօս հայերից և հայերէն գիտցող օտարազգիներից, որոնք այնպիսի քառեր են փնտրում կրթման բառարանում կամ հարցնում գիտցողից, որ հայոց բառարանում երբէք գոյալթիւն չեն ունեցելու ինչո՞ւ—որովհետև առուերը տպուած են կղել խիստ անորոշ, մութ, կասկածելի են եղելու: Ուշագրութեամբ նայեցէք մեր առուերի վրայ և կը տեսնէք, որ շատերը տպագրուած դէպքում շափաղանց միմեանց նման են և ընթերցողին թիւրիմացութեան մէջ են ձգում: Օրինակ ա և ա, դ և դ, դ և դ, ս և ս, ու և տ, յ և ց, և այլն այնքան նման են միմեանց, որ հեշտութեամբ մարդ սխալուած է:

Աւելացնենք և մեր այն ընդհանուր թուլութիւնը, որ տպագրութեան սրբազրութեան վրայ լուրջ ուշագրութիւն չենք դարձնում, որ մօնաօանդ պարբերական հրատարակութիւններում յանախ աններկիւ սխալներ են ստղղած լինում և կը տեսնենք, թէ սրբան դժուար դրութեան է մասնուած ընթերցողը դրուածքի հիշախմտաբ ըմբռնելու համար, սրբան անանդի գայթակղութիւնների է ենթարկուած լեզու սովորողը, հայոց դրականութեան հետ ծանօթանալ ցանկացողը:

Աւելի ևս աններկիւ է այս անուշազրութիւնը մեր դասագրքերի վերաբերմամբ, որոնց մէջ նոյնպէս շնորհիւ մեր առուերի ձևերի անորոշութեան, տպագրութեան արուեստի անկատարութեան աշակերտը պատահում է բաւական թիւրիմացութիւններին: Ելիչենք աւ բաժանմունքի աշակերտին, որ սկսում է նոր հայերէն կարդալ սովորել, սրբան դժուար դրութեան մէջ է լինում և ինքը ուսուցիչը մինչև վերը լիչ օւած նման առուերի տարբերութիւնները կարողանում է մի կերպ հասկանալ:

Դժբաղդարաբ մինչև այժմ չկայ մեր մէջ մի կանոնաւոր հիմքի վրայ դրուած հրատարակչ, ընկերութիւն, որ յասկապէս ուշք գարձնէր կանոնաւոր մաքուր տպագր-

^{*)} Այս մասին գրել եմ «Լոյս» 1912 թ. № 10:

բուած հայերէն գրքեր լոյս ընծայելու գործի վրայ, որ աշխատէր սպազրութեան արուեստը ծաղկեցնելու Մաքուր, գեղեցիկ սպազրութեան գիրքը ոչ միայն հանելի է, ոչ միայն ընթերցողի էտաէտիկական հաշակն է զարգացնում, այլև նպաստում է հեշտութեամբ կարգալու, ուրախութեամբ գնելու: Անվիճելի փաստ է, որ մանր տառերով, վատ թղթի վրայ սպազրութեան գիրքը աւելի դժուարութեամբ է կարդացուած, քան մաքուր, գեղեցիկ տառերով սպազրութեամբ, բացի այդ հայերէն գիրքը հայ ընթերցողների աւելի մեծ թիւ կարող է գրաւել նաև այն դէպքում, երբ խնամքով է սպազրութեան և դիւրամատչելի է:

Բնական է, որ սպազրութեան 400-ամեակի մեծ տօնին խնդիր բարձրացնեն հայ տառերի, հայ սպազրութեան արուեստի կատարելագործման: Իմ կարծիքով յանձնաժողովը պէտք է հրաւիրէ հմուտ մարդկանց սպազրութեան արուեստն իմացողների և լաւ նկարիչների— հայերէն գեղեցիկ տառեր նկարել տայ միջանի տեսակ, թէ գլխադրեր, թէ հասարակ գրեր, սպազրութեամբ տայ ձուլարանում մայրերը ու այդ տառերով մի երկու կարևոր նկատուած գրքերը հրատարակէ, իրրև նմուշ սպազրութեան արուեստի:

Լաւ կը լինի, հէնց հայ սպազրութեան 400-ամեայ պատմութեան յօրեկանական գիրքը սպազրել այդ նոր ձևով պատրաստած տառերով, ուր որ ի միջի այլոց երևան կը դայ և մեր տառերի ձևերի զարգացումը:

Տպագրութեան արուեստը հայ սպազրութեան տօնին անմիջական կերպով կցուած և անհրաժեշտ է այդ խնդիրը լուրջ քննութեան առնել:

Pessimist

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՎ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Համեստութիւնը զարգարանք է մարդու համար, թէև կարելի է առանց նրան էլ,—ստում են գերմանացիք: Յովհաննէս Յովհաննիսեանի ամենամեծ ու ամենափայլուն զարգարանքը այն անօրինակ համեստութիւնն է, որից երբէք իր կեանքի մէջ չի բաժանուել բանաստեղծը:

Եւ այդ համեստութիւնն է պատճառը, որ ներկայիս մեր ամենամեծ ու անգրանիկ բանաստեղծի յօրեկանի շուրջը չեն յուռում աղմուկ ու բազարին յատուկ բեկլամ:

Յովհաննէս Յովհաննիսեանը միշտ փախել է բեկլամից, աղմուկից, իր ստացած կրթութեամբ ու իր տաղանդի չափով լինելով բարձր մեր բոլոր արդի բանաստեղծներից, Յովհաննէս Յովհաննիսեանը կարող էր և իրաւունք ունէր խոշոր տեղ գրաւելու մեր հասարակական կեանքի մէջ, աղմուկ հանել ու ժողովրդականութիւն վաստակել հայ ժողովրդի մէջ, ինչպէս արել և անում են նրա կրտսեր գրչակիցները,—բայց, ստում եմ, նա շարունակ փախել է աղմուկից և, միշտ հաւատարիմ իր բնաւորութեան, չուկայի աղմուկից ու գովասանքից չի

խաբուել, չի մուրացել ծափեր և ներբողներ:

Այդ է պատճառը, որ այսօր հրատարակի վրայ երևացող ու աղմուկ հանող բանաստեղծների շարքում մենք չենք տեսնում Յովհաննէս Յովհաննիսեանի անունը:

Լրջմիտ ու իր գործիչներին դնահատող հասարակութեան համար, իհարկէ, այդ հանգամանքը չի կարող արգելք լինել, որ Յովհաննէս Յովհաննիսեանի յօրեկանը տօնուի պատշաճ սիրով ու պատրաստակամութեամբ: Յօրեկանների ժամանակ հասարակութիւնը իր դնահատութեան կշեռքի վրայ է դնում յօրեկարների մատուցած ծառայութիւններն ու նրանց քանքարի չափը, բայց ոչ այն աղմուկը, որ հանոյակատար մարդիկ տեղի թէ անտեղի բարձրացնում են նրան տնունների շուրջը:

Յովհաննէս Յովհաննիսեանը աղմուկ չի հանել, ճիշտ է, բայց նա գործել է մեղուի, մրջիւնի ժրջանութեամբ, գործել է նրանց օգտակարութեան չափով: Ինչպէս զիտէք, դատարկ տակառներն են միայն, որ ճիշտ ու ճշմարիտ են գործում փողոցների քարերի վրայից: Յովհաննէս Յովհաննիսեանը ընթացել է լուռ, առանց հարայ-հրոցի և այսօր նրա սուած արգիւնքի բարոյական կողմն այնքան մեծ է, որ անկարելի է լրագրական մի յօդուածում ընդգրկել այն:

Նրա գրիչը մեր բանաստեղծական գրականութեան մէջ տուել է այնպիսի կշիռով կտորներ, որոնք երբէք չեն կարող ժողացուել և որոնցով դեռ շատ սերունդներ պիտի կրթուեն և հիանան:

Մեր սիրտը, մեր հոգին յուզող ու ալեկոծող ինչ աւելի սիրուն երգ էք ուզում, քան Յովհաննէս Յովհաննիսեանի անմահ «Ալուզն» է:

- Կամ անձ ձեզ մի ուրիշ շեղէօլը.
- Չքնաղ մանուկ, հրեշտակ դէմքով,
- Որ մի դրախտ երկնային...
- Ահա ձեզ մի ուրիշը ևս.
- Որպէս յազթանդամ մի ծերուկ հակայ,
- Կախուած է ժայռը ջրերի վրայ.
- Ալիքը կայտառ գնում են, գալիս
- Եւ ժայռին սիրոյ համբոյր են տալիս...
- Կարելի է անվերջ բերել Յովհաննէս Յովհաննիսեանի բանաստեղծութիւններից կտորներ, մէկը միւսից գողարիկ, մէկը միւսից հմայիչ:

Այսօր հայ հասարակութիւնը ուզում է տօնել Յովհաննէս Յովհաննիսեանի գրական գործունէութեան 30 ամեայ յօրեկանը:

Պատիւ ունի հասարակութեանը, որ զիտէ պատկեր իր վաստակաւոր գործիչների արեւարդ նակաւոր: Յովհաննէս Յովհաննիսեանը մէկն է այն սակաւաթիւ գործիչներից, որոնց յօրեկանը հասարակութիւնը պարտաւոր է տօնել:

Յովհաննէս Յովհաննիսեանը բացի բանաստեղծ լինելուց, երկար ու ձիգ մաշող տարիներ եղել է ուսուցիչ մեր մի շարք միջնակարգ դպրոցներում և Գէորգ-